«Տիկին Բովարիի Տրանսֆորմացիան արտասահմանյան կինոմշակույթում»

Սովորող՝ *Քրիսիտինե Թորոսյան*

«Մխիթար Սեբաստացի» Կրթահամալիր

Ղեկավար՝ *Հրայր Խաչատրյան*

Գրախոս՝ *Հասմիկ Ղազարյան*

Երևան 2024թ.

Բովանդակություն

Ներածություն……..... 3

Գլուխ 1. Գ.Ֆլոբերի Տիկին Բովարի ստեղծագործության վերլուծությունը.. 4

Գլուխ 2. Մադամ Բովարիի երկու կինոընթերցում…… 12

Եզրակացություն……..... 17

Ներածություն

Մեր հետազոտության ընթացքում փորձում ենք պարզաբանել, վերլուծել, թե ինչպե՞ս է Ֆլոբերի «Տիկին Բովարի» գրական ստեղծագործությունը տեղափոխվում կինոարվեստի դաշտ: Կարդալով ու վերլուծելով գրական կոթողը՝ մենք փորձում ենք հասկանալ, թե ստեղծագործությունը ինչպես է իրացվում արվեստի այլ հարթակում: Մենք նպատակ ենք հետապնդում բացահայտել, թե ինչպես է մի գեղարվեստական սյուժեն փոխակերպվում ու մեկնաբանվում շարժապատկերային բովանդակության կինո ենթատեքստում: Հետաքրքրական է, որ կինոարվեստը շատ անգամ վերցրել է գրական սյուժեները և փորձել ադապտացնել իր հարթակում: Մենք կվերլուծենք նույն բովանդակությունը տարբեր տեսանկյուններից՝ մեր տրամադրության ունենալով տակ տարբեր գեղարվետսական, գեղագիտական հայացքներ:

Հետազոտության ընթացքում կբացահայտենք, թե ինչքանով են նման և ինչքանով տարբեր կինոստեղծագործությունները: Քննության կառնենք համանուն ստեղծագործության երկու ֆիլմ. մեկը ֆրանսիացի ռեժիսոր, ֆրանսիական նոր ալիքի ներկայացուցիչներից՝ Կլոդ Շաբրոլի ֆիլմն է, մյուսը՝ ֆրանկոամերիկացի ռեժիսոր Սոֆի Բարտեզի ֆիլմը: Կփորձենք գտնել առանձնահատկությունները, նմանությունները ու տարբերությունները, և թե ռեժիսորները ի՞նչ դիտանկյուններից են նայում տվյալ ստեղծագոծությանը:

«Տիկին Բովարի» գրքի հերոսների վերլուծությունը

Էմմայի կերպարը գրքի մեջ

Կարդալով Գյուստավ Ֆլոբերի գիրքը՝ կարող ենք փաստել, որ գրքի գլխավոր հերոսուհին՝ Էմման, ամբիցիոզ կին էր, ով ոգեշնչված էր ասպետական վեպերի բովանդակությունից և իր իդեալները կապում էր ոչ իրական կերպարների հետ: Սրա արդյունքում շատ անգամ իրականությունը և երևակայությունը Էմմայի մոտ նույնական էին, ինչը տեսնում ենք Ռուդոլֆի և Լեոնի կեպարներում: Վեպն ընթերցելիս մեկ անգամ չենք համոզվում, որ Էմման ոչ թե ապրում է իրականության մեջ, այլ փորձում է ստեղծել այն իրականությունը, որը չի համապատասխանում այն հասարակական կարգերին, որի մեջ ապրում էր նա:

Շառլի հետ ամուսնանալով՝ նա բախվում է այնպիսի իրականության, որին պատրաստ չէր հոգեպես և էմոցիոնալ առումներով: Շառլի մեջ նա տեսնում էր մի կերպարի, ով իր մասնագիտական կարողություններից ու առօրյայից այն կողմ ոչինչ չի տեսնում և դրանով իրեն բարձր է զգում, քանի որ հարաբերությունների մեջ կարևորում է նաև այն կողմը, թե ինչքանով է Շառլը հաղորդակից իր արժեհամակարգին, գեղարվեստական գրականությունը, նրա հմայքներին, ու, առհասարակ, արվեստին

Գրքում նկարագրված օպերայի տեսարանով տեսնում ենք, որ Շառլը չունի նույն կրթվածությունը, ինչ Լեոնը: Նա գաղափար չունի արվեստից, առավել ևս գրականությունից, ինչը նրա վիճակը ավելի է ավելի խոցելի է դարձնում Էմմայի աչքերում: Օպերայի ժամանակ Շառլը անընդհատ հարցեր է տալիս Էմմային՝ խանգարելով նրան ու ստիպելով փոշմանել գալու համար: Շառլը ինքն էլ չի հասկանում, թե որքան է այդպես հիասթափեցնում Էմմային՝ ստիպելով նրան զզվել իրենից: Իսկ Էմման այդ պահին ամբողջովին տարվել էր օպերայով: Դա նրա փախուստի միջոցն էր, նա տենչում էր օպերայի գլխավոր հերոսին, որը նրա տղամարդու էմոցիոնալ պատկերացումների մարմնավորումն էր: Նա հիշում էր իր հարսանիքը, հիշում էր, թե ինչպես էր պատրաստվում ամուսնանալ ու փոշմանում էր, երազում էր, որ այդ ժամանակ նրան մեկը զգուշացներ, թե ինչ է իրեն սպասվում, հետ պահեր նրան այդ մտքից: Մտածում էր, թե ինչու շտապեց, ինչու չհամբերեց: Նա այդ պահին մտածում էր ներկայացման մեջ խաղացող կերպարի մասին՝

երազելով փախչել նրա հետ թողնել Շառլին, թողել բոլորին ու փախչել: Լեոնին տեսնելուց հետո Էմմային թվում էր, թե նա գտել է իր փրկությունը՝ հանկարծակի նորից վեսկսված էմոցիաները անճարությունից ու անհույս լինելուց: Անսպասելի հանդիպումը Էմմային տարավ այն մտքին, որ նա նորից սիրում է Լեոնին կամ որ դեռ չի մոռացել: Նրանք սառն էին միմյանց հանդեպ՝ վախենալով ինչ-որ սխալ բան անել Շառլի ներկայությամբ, սակայն թատրոնից հետո Լեոնը հասկացավ, որ կարող է օգտվել Շառլի բացակայությունից և զգաց, որ Էմմայի հետ ամեն ինչ արդեն շատ է ձգձգվել ու ճիշտ է գործը շուտ հասցնել ավարտին, խաղալով Էմմայի զգացմունքների հետ՝ նորից օգտագործեց նրան, ինչպես Ռուդոլֆը:

Էմմային ամուսնական կյանքը չէր բավարարում, քանի որ սպասումները և խառնվածքները տարբեր էին, և այս ամենի արդյունքում ինքը ունեցավ վտանգավոր կապեր (Ռուդոլֆի ու Լեոնի հետ) ամուսնական հարաբերություններից դուրս: Իհարկե, մենք չենք ժխտում, որ Շառլը երևակայությունից այդքան էլ չէր փայլում և շատ էր սրբադասում Էմմային, սակայն մենք հարկն ենք համարում նշել, որ այս ամենի պատճառը նաև իր մոր հետ կապն էր և այն պրոեկցիաները, որը Շառլը կապում էր Էմմայի հետ: Մենք այստեղ տեսնում ենք, որ երկու հերոսներն էլ ոչ թե ապրում են իրական կեցության մեջ, այլ փորձում են դիմացինին հարմարացնել ըստ սեփական երևակայական պահանջմունքների: Էմման փորձում է Ռուդոլֆի և Լեոնի միջոցով լրացնել այն բացը, որը չէր կարողանում բավարարել իր ամուսինը: Սրա արդյունքում մենք ականատես ենք լինում տարբեր դավաճանությունների, որի արդարացումը Էմման ուներ իր ներսում: Մենք չենք փորձի այս ամենը դիտարկել զուտ բարոյագիտական տեսանկյունից, այլ ցույց տանք գլխավոր հերոսուհու ներաշխարհը:

Շառլը չէր համապատասխանում Էմմայի պատկերացումներին՝ նա չէր հասկանում Էմմայի էմոցիաները վարքագծի պատճառը, Էմման չէր խոսում Շառլի հետ չէր կիսվում նրա հետ ու Շառլին թվում էր, որ ամեն ինչ նորմալ է: Չկարողնալով փոխել իր ամուսնուն՝ Էմման սկսում է ատել նրան, նույնիսկ զզվել նրանից: Պարահանդեսից հետո երբ Էմման հասկանում ու զգում է, թե ինչպես են ապրում ավելի բարձր խավի մարդիկ, նա ավելի շատ է սկսում ատել իր կյանքը: Ամեն ինչ բերում է նրան, որ Էմմայի հոգեբանական վիճակը ազդում է նրա ֆիզիկական վիճակի վրա, ինչն էլ ստիպում է Շառլին, որ նրանք տեղափոխվեն: Տեղափոխվելուց հետո Էմմայի կյանքը լրիվ փոխվում է, հիմնականում նրա աղջկա ծնունդը (ըստ մեզ Էմման չէր սիրում իր

աղջկան, ուղղակի երբեմն նրա հանդեպ ջերմ էմոցիաներ էր ցուցաբրում, քանի որ աղջիկն էլ իրականությունից փախչելու մեթոդ էր. հոգեբանության մեջ կա հասկացություն՝ Էսկապիզմ. իրականությունից փախուստ է մտավոր կամ զգացմունքային առումով):

Տհաճ, ձանձրալի, առօրյա իրականությունից փախուստ դեպի այլություն, այլաշխարհիկություն: Փախուստ իրական աշխարհից ցանկացած անհրաժեշտ միջոցներով: Սովորաբար այս երևույթը բացասական է. մարդը խնդիրներ լուծելու փոխարեն սուզվում է պատկերացումների, երևակայությունների աշխարհ, և մենք տեսնում ենք, որ Էմման դրա վառ արտացոլումն է: Էմման ծանոթացավ Լեոնի հետ ու հասկացավ, որ կարծես թե գտել է մեկին, ով հասկանում է նրան ամբողջովին ու համապատասխանում է նրա պատկերացումներին, և Լեոնի ֆոնի վրա Շառլը Էմմային ավելի անտանելի էր թվում: Լեոնի հետ կապված ամեն ինչ Էմմայի համար նոր էր: Գրքում նկարագրվող զգացմունքները ու էմոցիաները Լեոնի ու Էմմայի համար բոլորովին նոր էին և ինչ-որ առումով լրիվ անպաշտպան: Նրանք հասկանում են, որ իրար հանդեպ ինչ-որ բան են զգում, բայց նրանցից ոչ ոք չի խոսում դրա մասին՝ նախընտրելով ամբողջությամբ տրվել իրենց համար նոր էմոցիաներին:

Նրանք բավարարվում են առօրյա խոսակցություններով ու միմյանց ներկայությամբ: Բայց և Միևնույն ժամանակ երկուսն էլ իրենց անօգնական են զգում: Առավել ևս Լեոնը, ով ամբողջությամբ չի հասկանում, թե ինչ է պետք անել, չի կարողանում դիմանալ այդ հուսահատ վիճակին ու լքում է գյուղը: Ինչպես նշում է հեղինակը գրքում «Լեոնը, գլուխը կոտրում էր՝ փորձելով հասկանալ, թե ինչպես բացատրի Էմմային իր զգացմունքները: Նա վախենում էր Էմմային հետ վանել իրենից, իսկ մյուս կողմից ամաչում էր իր թուլամորթության համար, զգացմունքների լիությունից և սեփական անօգնական վիճակի գիտակցումից. Լեոնի աչքերը արցունքներով էին լցվում»

«Էմման ինքն իրեն չէր հարցնում սիրում է Լեոնին թե ոչ: Սերը՝ թվում էր նրան գալիս է հանկարծակի կայծակնային փայլով և փոթորկի հարվածներով. Այն հորձանուտ է, որը ներխուժում է երկնքից կյանք, շրջում է այն գլխիվայր, կտրում է ցանկությունները և սիրտը զցումը անդունդը»: Ի վերջո, Էմման էմոցիոնալ առումով լրիվ սպառվում է: Մենք տեսնում ենք, որ Էմման ապրում է իր կողմից ստեղծած պատրանքային իրականությունում: Այդ վիճակը նրա մոտ շարունակվում է մինչև Ռուդոլֆի հայտնվելը, ում

համար Էմման հերթական կինն էր, որի հետ Ռուդոլֆը ձգտում էր լինել: Ռուդոլֆը գիտեր Էմմայի թույլ տեղերը ու կարողանում էր այդ ամենը ճիշտ օգտագործել: Էմմայի համար Ռուդոլֆը իր ձանձրալի ու տխուր կյանքի միակ փրկությունն էր, մինչդեռ Ռուդոլֆի համար Էմման ուղղակի զվարճալի ժամանակ անցկացնելու միջոց էր: Ռուդոլֆը չէր գնահատում Էմմային ու չէր սիրում: Ռուդոլֆի Էմմային լքելուց հետո վերջինիս կյանքը վերածվում է իրական մղձավանջի: Ֆիզիկական և հոգեկան առողջության վատթարացման պատճառով Էմման վերջնականապես խելագարվում է: Նա ծախսում է Շառլի գումարը, որի պատճառով նրանք ընկնում են պարտքերի մեջ: Ծանր ընտանեկան վիճակը, անսահման պարտքերը, Լեոնի անհետացումը Էմմայի կյանքից, այն որ Ռուդոլֆը ի վերջո չկարողացավ Էմմային օգնել և նրա ծանր հոգեբանական վիճակը դրդում են Էմմային ինքնասպանության:

Շառլի կերպարը գրքում

Շառլը բարի, բայց շատ միամիտ կերպար էր կնոջ հանդեպ սերը կուրացրել էր նրան, և նա չէր տեսնում այն ամենը, ինչ հենց իր աչքի դիմաց էր: Նա չէր հասկանում ու գիտակցում, որ Էմման իրեն չի սիրում: Շառլին հասկանալը իրականում բարդ է, քանի որ հեղինակը չի նկարագրում նրա ապրումները: Շառլը ամբողջովին տրված է աշխատանքին, նրա համար կյանքը սահմանափակվում է միայն իր աշխատանքով և առօրյա տնային գործերով, նա չի ձգտում ավելիին, բավարարվում է այն ամենով ինչին հասել է և կարծում է, որ ամեն ինչ բավարարում է նաև Էմմային: Շառլի համար Էմման անձնական հաղթանակ էր: Էմման գեղեցիկ արտաքինով, կրթված կին է, ում հետ Շառլը ամուսնացել էր: Էմմայի շնորհիվ Շառլի կարգավիճակը հասարակության մեջ բարձրանում է, ինչը ավելի շատ է ստիպում նրան սիրել Էմմային: Բացի այդ Շառլը Էմմային դիտարկում էր միայն արտաքին տվյալներով (նրա գեղեցիկ և երկար մազերը, նուրբ մարմնի կառուցվածքը, մաշկի ճերմակությունը): Մենք տեսնում ենք, որ զույգերի մեջ չկա էմոցիոնալ, հոգեբանական կապ, ինչի արդյունքում Էմմայի ներաշխարհը փակ էր Շառլի համար: Սակայն Շառլը չէր հասկանում Էմմային (ինչպես նաև իր նախորդ կնոջը): Իր մոր վերահսկողության ու կառավարելու պատճառով Շառլը չի կարողանում հասկանալ մարդկանց առավել ևս կանանց, նա չի կարողանում ազատ շփվել կանանց հետ, չի կարողանում հասկանալ Էմմային: Շառլը երջանիկ է և, բավարարվելով իր երջանկությամբ, նա չի տեսնում, որ Էմման

երջանիկ չէ նրա կողքին: Շառլի համար որոշ էմոցիոնալ արժեքներ չունեն նույն նշանակությունը, ինչ Էմմայի համար:

Լերեի կերպարը գրքում

Լերեն՝ գրքի ամենակարևոր ու գլխավոր կերպարներից մեկը, շատ խորամանկ էր: Լերեն շատ լավ հասկանում էր մարդկանց թուլությունները ու շատ լավ կարողանում էր օգտագործել դրանք նրանց դեմ: Լերեն նաև կարողանում էր շատ լավ ճանաչել մարդկանց և կարդում էր նրանց, ինչպես բաց գիրք: Օգտագործելով իր բնավորության հմայքը, ճկունությունը, հասկացողությունը ու համբերությունը՝ կարողանում էր մարդկանցից ստանալ այն, ինչ իրեն պետք է: Այդպես նա շատ արագ հասկանում է որ Էմման բավարարված չէ իր կյանքով և հասկանում է այն ամենը, ինչ կատրավում էր նրա կյանքում: Շփվելով Էմմայի հետ՝ Լերեն միանգամից հասկանում է, որ Էմման այն մարդկանցից է, ում Լերեն կարող է գցել իր «ծուղակը»: Հասկանալով, որ Էմմայի միջոցները չեն ներում գնել իր ամեն ուզածը, Լերեն ցույց է տալիս, որ գումարը իր համար այնքան էլ մեծ նշանակություն չունի՝ ստեղծելով Էմմայի համար միջավայր, որտեղ Էմման գնում է ամեն իր ուզածը առանց մտածելու գումարի մասին, ինչն էլ հետո բերում է Էմմային մեծ պարտքերի: Բացի դրանից, իմանալով Էմմայի թույլ տեղերը՝ օգտագործելով Էմմայի պարտքերը և այն, որ Էմման չի կարողանում ադեկվատ դատել իրավիճակը մանիպուլացիայի է ենթարկում նրան՝ ստիպելով վարվել ու շարժվել այնպես, ինչպես Լերեն է ուզում:

Ռուդոլֆի կերպարը գրքում

Ռուդոլֆի համար Էմմայի հետ կապը հերթականն էր, Էմման հերթական կինն էր, որի հետ Ռուդոլֆը ուղղակի ուզում էր ժամանակ անցկացնել: Ռուդոլֆը չէր սիրում Էմմային այլ ուղղակի օգտագործում էր իր սեփական հաճույքների համար, որպեսզի ստանար նոր էմոցիաներ ու ձանձրալի իրականությունը փոխեր, ինչպես նաև հանգստացներ իր տղամարդկային էգոն ու փառասիրությունը: Ռուդոլֆի համար Էմման յուրօրինակ կին էր, նա իրեն զուսպ էր պահում, չնայած որ ուզում էր տրվել Ռուդոլֆին: Ռուդոլֆը դա շատ լավ հասկանում էր ու կարողանում էր ազդել Էմմայի վրա: Ռուդիլֆին

դուր չէր գալիս Էմմայի չափից դուրս սենտիմենտալ լինելը, բայց և միևնույն ժամանակ Էմման ձգում էր Ռուդոլֆին: Դրա համար երբ Էմման առաջարկեց Ռուդոլֆին փախչել, Ռուդոլֆը միանգամից այդ միտքը իր գլխից հանելու փոխարեն մի պահ մտածեց, թե ինչ կլինի եթե նրանք իրոք փախչեն:

Լեոնի կերպարը գրքում

Լեոնը ռոմանտիկ, անինքնավստահ ու հուսահատ կերպար էր, ում համար Էմման ավելի շատ հաղթանակի ու գավաթի նման մի բան էր, քան ուղղակի տիրուհի: Լեոնը հպարտանում էր Էմմայի հետ եղած կապով: Էմմային հետ լինելը բարձրացնում էր իր ինքնագնահատականը ու փրկում նրան մենությունից: Լինել Էմմայի հետ, ով գեղեցիկ էր, կրթված, ռոմանտիկ ու շատ հարցերում նման Լեոնին, Լեոնի համար ինչ-որ մի բան նվաճելու պես էր: Սկզբում Լեոնը իրոք սիրում էր Էմմային: Նա տանջվում էր, ուզում էր Էմմայի հետ լինել: Բայց սեփական անօգնական վիճակը այդ հարցում ստիպեց նրան փախչել գյուղից և կենտրոնանալ իր անձի վրա: Հասունանալով Լեոնը հասկանում է, որ Էմման ինչպես և Ռուդոլֆի դեպքում ձանձրալի իրականությունից փախչելու միջոց էր: Բացի դրանից՝ Լեոնին դուր էր գալիս այն, որ Էմման օգտագործում է իր միջոցները, որպեսզի ապահովի շքեղ կյանք Լեոնի համար: Բայց ժամանակի ընթացքում Լեոնն էլ չի դիմանում Էմմայի էմոցիոնալ ճնշմանը: Դրա համար, երբ Էմման հայտնվեց խնդիրների մեջ սկսեց ավելի շատ հայտնվել Լեոնի աշխատանքի վայրում, Լեոնը սկսեց ամաչել Էմմայից և ամեն կերպ փորձում էր թաքցնել նրա հետ կապը:

Ռուդոլֆի, Լեոնի ու Շառլի դերերը որպես տղամարդ Էմմայի կյանքում:

Ռուդոլֆը էգոկենտրոն ու ինքնահավան անձնավորություն էր: Ռուդոլֆը մրցում էր Շառլի հետ այն ժամանակ, երբ Լեոնը փորձում էր Էմմային գտնել Ռուդոլֆի մեջ կամ Էմմային հիշեցնող մի բան: Ռուդոլֆը պատերազմի մեջ էր մտել Շառլի հետ և այն բանից հետո երբ Էմման տրվեց Ռուդոլֆին Շառլը նրա աչքերում արդեն թշվառ երևում և պարտված: Ռուդոլֆը, օգտագործելով Էմմայի թույլ կողմերը կարողանում էր շատ լավ

մանիպուլացիայի ենթարկել նրան, ինչն էլ հետո բերեց նրան, որ հենց Էմման ինքն էր մանիպուլացիայի ենթարկում թե Շառլին թե Լեոնին: Ռուդոլֆը ի համեմատ Շառլի և Լեոնի դոմինանտ էր նա կառավարում էր Էմմային Էմման մինչև վերջ Ռուդոլֆի մոտ ցույց չէր տալիս իր եսը և իր իրական ցանկությունները քանի որ վախենում էր քննադատվելուց Ռուդոլֆի կողմից: Հետագայում նույնը լինում է Լեոնի հետ, նա կարծես վերածվում է Էմմայի համար խաղալիքի նման մի բանի օգտագործման առարկա սեփական ցանկությունների համար:

Իսկ ինչ վերաբերում է Շառլին, ապա Էմման երբեք Շառլին չի վերաբերվել որպես տղամարդ, երբեք չի վստահել նրան և առավել ևս երբեք չի համարել որպես իր ամուսին համարելով նրան կամքով թույլ և խղճուկ: Քանի որ Շառլը չէր կառավարում իր պարտականությունները որպես ամուսին, այնպես ինչպես Էմման էր ուզում, Էմման գնալով ավելի ու ավելի էր օտարվում ու ավելի դոմինանտ էր դառնում բնավորությամբ իրենց հարաբերություններում: Էմման չէր համարում, որ Շառլը արժանի էր իրեն: Ռուդոլֆի դեպքում նա անսահման սիրահավաճ էր ու պատկերացնում էր իենց հարաբերությունների իդեալական ավարտը և ամեն ինչին նայում էր վարդագույն ակնոցով: ՈՒ, չնայած դրան, Ռուդոլֆը գնալով ոչնչացնում էր Էմմայի ինքնագնահատականը նրան ավելի հեշտ կառավարելու համար: Լեոնը սկսում է ինչ-որ չափով կախված լինել Էմմայից: Նրա հետ հանդիպումներից, քանի որ բացի հաղթանակի զգացողությունից Էմման հեշտ միջոց էր ֆիզիկական բավարարվածություն ստանալու: Բացի դրանից նրանց հանդիպումները թանկարժեք հյուանոցներում, նանք շքեղ վայելում էին կյանքը՝ ծախսելով Շառլի վաստակած գումարը: Լեոնը ինքն էլ սկսում է հարմարվել և սովորել նման կյանքին:

Ռուդոլֆի, Լեոնի, Շառլի ու Լերեի համեմատությունը:

Շառլը, ի տարբերություն, մնացած բոլոր տղամարդկանց Էմմայի կյանքում չափազանց միամիտ էր և չուներ սեփականատիրոջ զգացողությունը, նա հեռատես չէր և չափազանց շատ էր վստահում կնոջը ու նրան շրջապատող տղամարդկանց, մտածելով, որ նա իր դիմաց դրված ամուսնական պատքը արդեն կատարում է աշխատելով, գումար վաստակելով ու զբաղեցնելով լավ սոցիալական ստատուս հասարակության մեջ: Նա չէր էլ ենթադրում, որ Էմման կարող է դավաճանել նրան և մինչև

վերջին պահը նույնիսկ չէր հավատում։ Նա ընկալում էր Էմմային որպես մոր կերպարի փոխլրացում և ուզում էր որպեսզի Էմման վերաբերվի նրան մայրական հոգատարությամբ։ Մեծանալով իր մոր իշխանության տակ՝ նա որպես տղամարդ հաստատված չէր՝ ի տարբերություն Ռուդոլֆի, ով ուներ կյանքի մեծ փորձ։ Որպես հաստատված և բռուտալ տղամարդ Ռուդոլֆը լավ արտահայտված կերպար էր, հասկանում էր, թե ինչ է պետք Էմմային։ Չլինելով ոչ այնքան ռոմանտիկ անձնավորություն, որքան Լեոնը, Ռուդոլֆը կարծես կարողանում էր բավարարել Էմմայի հոգեբանական և ֆիզիկական բոլոր սասումներն ու ցանկությունները։ Լերեն մասկուլին (արական) էր ու խորամանկ, սակայն չէր հետապնդում նույն նպատակները։ Նա նույնպես հասկանում էր Էմմային նա գիտեր՝ ինչ է պետք նրան, ինչպիսի կյանքի է Էմման ձգտում և օգտագործելով իր խելքը հասնում է իր ուզածին։ Շառլին նման էր ոչ այնքան պահվածքով, բայց Էմայի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքով Լեոնը։ Լեոնը չէր վախենում կորցնել Էմմային։ Նա ավելի շատ բավարարում էր Էմմայի Էմոցիոնալ ցանկությունները։

Կերպարները Ֆիլմում
«Մադամ Բովարի» (2014թվական, ռեժիսոր՝ Սոֆի Բարտեզ)

Էմմա Բովարի (Միա Վասիկովսկա)

Ֆիլմում Էմման չափազանց խղճուկ տեսք ուներ ու տպավորություն էր, թե նա ամեն ինչում ենթարկվում է Շառլին և փորձելով շեղել նրա ուշադրությունը փորձում էր ամեն կերպ նրան դուր գալ. այն ինչ գրքում ամեն բան հակառակն էր: Ֆիլմը Էմմային ցույց է տալիս ավելի պրիմիտիվ, քան գրքում էր, սակայն գրքում Էմման շատ հաճախ փայլում էր իր Էմոցիոնալ ինտելեկտով: Ֆիլմը ցույց չի տալիս երկու կարևոր տեսարան պարահանդեսն ու Էմմայի և Շառլի մոր շփման տեսարաններից որևէ մեկը:

Առաջինի դեպքում ամեն ինչ պարզ կդառնար, թե ինչու է Էմման փորձում փախչել իր կյանքից: Բացի դրանից ֆիլմը ցույց չի տալիս Էմմայի կերպարի ամբողջ խորությունը, Էմմային շքեղությունը բերում էր ռոմանտիկ էմոցիաներ որոնց պակասը նա զգում էր Շառլի հետ ամուսնության ժամանակ, իսկ ֆիլմում նա ուղղակի փորձում էր գեղցեկացնել իր կյանքը շքեղ հագուստով և իրերով: Գրքում Էմման փնտրում էր ինչ-որ հետաքրքրի անիրական ենույթ գաղտնիք բացահայտելու համար, ինչը որ ամենակարևորն է, և դարձել էր նրա դավաճանությունների պատճառը, նա փնտրում էր մեկին, ով իր աշխարհիկ կյանքը կվերածի երկնայինի՝ տալով նրան վառ էմոցիաներ: Իսկ ֆիլմում նա ուղղակի դավաճանեց իր ամուսնուն, քանի որ ուղղակի սիրահարվել էր Ռուդոլֆին և ինքն իր վրա չկարողացավ իշխանություն հաստատի:

Ռուդոլֆ (Լոգան Մարշալլ-Գրին)

Ռուդոլֆի կերպարը ֆիլմում ինչպես և Էմմայինը մինչև վերջ բացահայտված չէր Ռուդոլֆի մոտիվները էմոցցիաները: Տպավորություն էր որ Ռուդոլֆն ու Էմանն սիրում են իրար Միայն որովհետև էդպես էր պետք: Ռուդոլֆին շատ հասարակ էին ներկայացրել այն ինչ գրքում նա տատանվում էր իր որոշումների մեջ արդյոք նա բավարարաչափ ցիրում էր Էմմային նրա հետք փախչելու համար, և նա, իրոք, մտածում էր այ տարբերակի շուրջ: Ֆիլմում նա շատ հասարակ կերպար էր:

Շառլ (Գենրի Լլոյդ-Հյուզ)

Շառլի կերպարը ֆիլմում ամենավատ արտահայտվածնն էր. չկար ո՛չ Շառլի էմոցիաները, ո՛չ նրա պահվածքի պատճառները ու մոտիվները, նրա բնավորություն լավ արտահայտված չէր և ցույց չէր տված, որ նա իրոք սիրում է Էմմային և վախենում է նրան կարցնելուց, ամեն կերպ ուզում է մտնել նրա անձնական տարացք նրան հասկանալու համար, ինչպես որ այդ ամենը ցույց էր տրված գրքում: Ֆիլմում Շառլը կարծես թքած ուներ իր կնոջ վրա: Ֆիլմում Շառլի կերպարը ամբողջովին արտահայտված չէր:

Լեոն (Էզրա Միլլեր)

Ըստ իս, ամենալավ արտահայտված կերպարներից մեկը ֆիլմում Լոենն էր, նրա սկզբնային ռոմանտիկությունը նրա թշվառ աներանելի վիճակը տենչալ մեկին, բայց չկարողնալ նրա հետ լինել, շատ լավ էր արտահայտված սկզբում: Ինչպես նաև ֆիլմի վերջում, երբ նա կորցրեց իր երբեմնի անպատասխան սերը, և Էմման նրա համար դարձավ ոչ այլ ինչ, քան ուղղակի մեկը, ում Լեոնը երբևիցե սիրել էր Լեոնի զգացմունքնները գրքի ու ֆիլմի վերջում նրա սկզբնական զգացմունքքների արտացոլքնքն էր: Դա արդեն նրա ինքնասիրության հարցն էր լինել Էմմայի հետ:

Լերե (Ռիս Իվանս)

Կարծում եմ՝ այս Ֆիլմում ամենալավ արտահայտված կերպարը Լերեն էր, ռեժիսորը շատ լավ էր փոխանցել նրա կերպարի էությունը: Թե դերասանական խաղը, թե Լերեի պահվածքը ֆիլմում ամեն ինչ ճշգրիտ փոխանցած էր: Լերեյի մանիպուլատիվ և չար կերպարը, այն որ Լերեն հասկացել էր ինչ օգհուտ կարող էր ունենալ Էմմայի և ինչպես և գրքում առանց խղճի խայթի կամաց-կամաց հասնում է իր ուզածին:

Ֆիլմի ընդհանուր վերլուծություն

Ֆիլմը շատ լավ ներկայացրել էր Էմմային որպես կին և որրպես անձնավորություն, թեև ամբողջությամբ չէր փոխանցել նրա կերպարի բարդությունն ու բնությունը: Էմմային ներկայացրել էին որպես կին, որպես մարդ ում չէին հասկացել, ում օգտագործել էին, ով ինքն էր ինչ-որ չափով փչացրել ու կոծանել իր կյանքը: Սակայն այնպես ինչպես գրքում էր հեղինակի կողմից պահպանված չեզոքությունը չկար: Ֆիլմը ուզում էր ցույց տալ, որ Էմման շրջապատված է եղել սխալ մարդկանցով և որ Էմմա այլ կերպ վարվելու հնարավորություն չուներայլ կերպ վարվելու և նույիսկ ինչ-որ չափով արդարացնել Էմմային:

Տիկին Բովարի (1991 թվական ռեժիսոր՝ Կլոդ Շապրոլ)

Էմմա (Իզաբել Յուպպեր)

Այս ֆիլմում Էմման ընդհանրապես նման չէր սկզբնաղբյուրում ներկայացված կերպարին: Նա ապրում էր իր աշխարհիկ, ֆիլմում ցույց տրված չէ թե ինչ է իրականում նա ուզում և եթե ոչ մեջբերումները գրքից չէր հասկացվի, որ Էմման իրականում ոչ միայն բավարարված չի իր ամուսնության ընդհանուր կարգավիճակից այլ նաև չունի հոգեբանական բավարարվածություն ինչը ամեն ինչի հիմքն էր: Էմման էմոցիոնալ անձնավորություն էր, ով ամուսնության և իր ապագա կողակցի մեջ հենց դա էլ ուզում էր տեսնել ու գտնել: Ինչպես նշեցինք, ասպետական ստեղծագործություններից ոգեշնչված Էմման պռոեկցում էր այդ ամենը և ուզում էր, որպեսզի իր կյանքն էլ նման լիներ այդ ամենին: Սկզբում ամուսնանալով Շառլի հետ՝ նա կարծես փորձում էր փախչել իր հոր հետ ունեցած տաղտկալի կյանքից, իսկ հետո հանդիպելով Լեոնին ու Ռուդոլֆին նա այդ կերպ էր փորձում փախչել իրան չբավարարող կյանքից: Էմման ուզում էր, որ իրենով հիանան, բայց ֆիլմում Էմման կարծես դիտմամբ գրավում էր ցանկացածի ուշադրությունը՝ չպահելով իր մեջ այդ գաղտնիքը: Էմման ամեն կերպ փորձում էր իրեն ցույց տալ Շառլի մոտ, գրավել նրա ուշադրությունը, չնայած որ Էմման նկատվում էր հենց իր զսպվածությամբ և

ինչ-որ չափի համեստությամբ։ Ֆիլմը կարծես ավելի շատ կենտրոնանում էր գործողությունների ու իրողությունների վրա քան պատճառների։

Լեոն (Լյուկա Բեսոն)

Ըստ իս, այս ֆիլմում Լեոնը ամենվատ արտահայտված կերպարն էր. նրա անփորձառությունը և ռոմանտիկությունը, ինչպես նաև սկզբում Էմմայով տպավորվելը ոչ մի ձև ցույց տրված չէր։ Տպավորություն էր, թե Լեոնը զուտ ուղղակի լինելու համար էր։ Նա իր առջև դրված խնդիրը մինչև վերջ չիրագործեց։

Լերե (Ժան-Լուի Մորի)

Լերեն այս ֆիլմում ընդհանրապես նման չէ գրքում նկարագրված և ցույց տրված կերպարին։ Չէր զգացվում նրա սառնասրտությունը ու խղճի բացակայությունը, նա կարծես հաճույք էր ստանում իր գործից չնայած իրականում ըստ իս նա գործի մարդ էր և լրիվ անտարբեր ամեն ինչին։ Ֆիլմում Լերեն, չգիտես ինչու, նման էր բարի պապիկի, ավելի քան փորձառու գործարարի։

Ռուդոլֆ (Քրիստոֆ Մալավուա)

Ռուդոլֆը ամենաշատն էր նման գրքային կերպարին, նրա թեթևությունն ու հանգստությունը շատ լավ էր փոխանցված։ Ինչպես նաև այն, որ հասկանում էր ամեն ինչ՝ թե՛ Էմմային, թե՛ Շառլին, թե՛ իրողությունն ու այն. ինչ է պետք Էմմային։ Ռուդոլֆի կերպարը շատ լավ էր արտահայտված։ Նա կարողացավ ոչ միայն գրավել Էմմային այլ նաև գերել ստիպել նրան սիրահարվել հանգստացնել նրան, տալ այն ամենը, ինչ նրան էպետք։

Շառլ (Ժան-Ֆրանսուա Բալմեր)

Շառլը նույնպես շատ լավ արտահայտված էր կերպար էր, ֆիլմը շատ լավ ցույց էր տվել նրան նրա ոչնչությունը, այն թե ինչպես է նա վազում Էմմայի հետևից, բայց այդպես էլ չի կարողանում ստանալ նրա

ուշադրությունն ու սերը: Հետաքրքիր է, որ այս ֆիլմում Շառլը կարծես գոհ չէր այն ամենով, թե ինչ է կատարվում իրենց տանը, մթնոլորտը նրան դուր չէր գալիս ու նա փորձում էր ինչ-որ մի կերպ դուր գալ Էմմային այնպես, ինչպես նա փորձում էր գոհացնել իր մորը: Ֆիլմը այս ամենը շատ լավ ցույց էր տվել:

Եզրակացություն

Մեր հետազոտության ընթացքում պարզեցինք, որ գրականությունն ու ֆիլմերը տարբեր կերպ են մոտենում «Տիկին Բովարի» գրական ստեղծագործությանը: Հասկացանք, որ գրական-գեղարվեստական լեզուն և կինոլեզուն ունեն հեղինակային տարբերություններ նույնն սյուժեի վերաբերյալ: Այսինքն գրողը և ռեժիսորները նույն բովանդակությանը անդրադառնում են իրենց սուբյեկտիվ ընկալումների շրջանակում: Ինչպես մենք տեսնում ենք, Գ. Ֆլոբերը իր գործը գրելիս առաջնորդվում էր լինել ամենուր և միաժամանակ աննկատ սկզբունքի համաձայն ինչը չենք կարող ասել Սոֆի Բարտեզի և Կլոդ Շաբրոլի օրինակներով: Եթե ստեղծագործությունը ցույց է տալիս կնոջ ողբերգությունը, ով ապրում էր իր երևակայական աշխարհում ու, ոգեշնչվելով ասպետական ստեղծագործություններից, ուզում էր ստանալ նույնը և պրոեյկում էր իր կարդացածը իրականության վրա: Մենք տեսնում ենք նաև Էմմայի ողբերգությունը բորժուական հասարակության մեջ, նրա իղձը համապատասխանել ու լինել իր կարդացած գրականության մի մասը: Պահպանելով ու չքննադատելով գրքի հերոսներին՝ մենք տեսնում ենք, թե ինչպես է Ֆլոբերը ցույց տվել մի կնոջ կյանք, ով բավարարված չէր իր կարգավիճակով (ամուսնական կյանք): Նրա սպասումներն չարդարացան և չհամընկան իրականության հետ և ֆիզիկական ու հոգբանական, էմոցիոնալ բավարարվածություն չստանալը նրան դրդում էին մի շարք դավաճանությունների, ուրիշ քայլերի, որոնք էլ տարան դեպի գլխավոր հերոսուհու ինքնասպանությանը:

Մենք նկատում ենք, որ Սոֆի Բարտեզը կարեկցանքով է մոտենում Էմմա Բովարիի,ն ինչը չենք տեսնում Կլոդ Շաբրոլի օրինակով: Նա քննադատում է Էմմա Բովարիի պահվածքը նրա կապը երկու սիրեկանների հետ, իր անտարբերությունը Շառլ Բովարիի՝ իր ամուսնու հետ, նրա ֆինանսական կապիտալի վատնելը, աչքաթող անելը Շառլի էմոցիոնալ, ֆիզիկական, բարոյական կարիքները, տարբեր արկածախնդրություններին տրվելը. Շաբրոլը քննադատում է Էմմայի պահվածքը՝ անկախ նրանից, թե ինչ էմոցիոնալ կարգավիճակում էր նա գտնվում: Մենք հետազոտության ընթացքում պարզեցինք, որ նույն սյուժեն տարբեր մեկնաբանությունների է արժանանում՝ արդյունքում ստեղծելով բազմաշերտ բովանդակությունը:

Սոֆի Բարտեզի ֆիլմը իր հերթին ցույց է տալիս կնոջը՝ որպես կերպար, որպես էություն, որը հասկացված չէ, օտարված իր հասարակությունից. և դրանով ստեղծեց այլընտարնքային իրականություն: Որպես մարդ ցույց է տրված նրա ապրումները և էմոցիաները կնոջ տեսանկյունից, իսկ Շաբրոլի ֆիլմը իր հերթին ցույց է տալիս մեծ մասամբ տղամարդու տեսանկյունից՝ ավելի շատ շեշտը դնելով իրողության փաստերի և գործողությունների վրա: Վերլուծելով գրական և շարժապատկերային տեքստերը մենք հասկանում ենք, որ Ֆլոբերը ստեղծագործությունը ներկայացնում է որպես իրավիճակ՝ ուղղակի հետևելով դրան և չխառնվելով, ինչպես նաև ստեղծագործության մեջ չարտահայտելով իր սուբյեկտիվ կարծիքը: Իսկ Սոֆի Բարտեզը Տիկին Բովարի ֆիլմում իրադրությունը ներկայացնում է ավելի շատ էմոցիոնալ, կնոջ կարեկցող տեսանյկունից:

Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ ստեղծագորխությունը գրական դաշտից տեղափոխվելով կինոարվեստի դաշտ փոխվում է երկու տարբեր գեղարվեստական վերլուծական մոտեցումների: Մեր հետազոտությունը չի հետապնդում բացահայտել ստեղծագործության բացարձակ օբյեկտիվությանը, այլ ցույց է տալիս, որ նույն բովանդակությունը տարբեր մշակութային հարթություններում կարող է այլ երանգ ստանալ:

Օգտագործած գրականության ցանկ

1. Гюстав Флобер, Госпожа Бовари, Азбука 2022, стр. 416
2. https://www.youtube.com/watch?v=vjl8DixFNAc
3. https://www.rewizor.ru/literature/reviews/gustav-flober-i-emma-bovari/
4. https://www.kinopoisk.ru/film/675563/?utm_referrer=www.google.com
5. https://www.kinopoisk.ru/film/64350/